վկայութիւնները ունինք 5-րդ դարուց, ուր՝ աստուածաբանական ճշմարտութիւնները հաստատելու համար՝ դիմում էին մանաւանդ Նոր պլատոնական ուղղութեան, որի հիմնական գաղափարները առնուած էին Պլատոնից։

Ա.

---

ՆԻՒՄԱՆ Վ. Լ. (Newmen), ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Մի ներածութիւնով, երկու առաջաբանով և նկատողութիւններով. հատոր I և II, Օքսֆորդ, 1887 Թ. (Անգլիերէն)։

---

Առաջին հատորը տալիս է մի նախապատրաստութիւն Արիստոտելի քաղաքականութեան համար. երկրորդը զբաղւում է Արիստոտելի գրքի ձեռագիրներով։ Հեղինակը իրան լաւ ծանօթ է ցոյց տալիս նիւթի մասին եղած նաև օտար գրականութեան հետ։ Որպէս երևում է, դեռ ուրիշ հատորներ պիտի յաջորդեն առաջին երկուսին։ Արիստոտելի խիստ գիտնական քննադատութիւնը Անգլիայի գիտնականների մէջ նկատելի առաջդիմութիւններ է անում։ Մենք ունինք արդէն մի հիանալի հրատարակութիւն Արիստոտելի Nikomachische Ethik Ալէքսանդր Գրանտի շատ մանրամասն բացատրութիւններով, և նոյնպիսին «Հոգու մասին» գրքի վերաբերեալ՝ Էդվին Վալլասի։ Նիւմանի գիրքը նոցա շարքում արժանաւոր տեղ է բռնում։ Մեր հայ հասարակութեան արդէն յայտնի է, որ նոյն Արիստոտելի ուսումնասիրութեան համար մեր կողմերը եկաւ անցեալ տարի Օքսֆորդի համալսարանի մի այլ պրոֆեսոր՝ պ. Կօնիբէր, որը կարծում է, թէ Դաւիթ Անյաղթի հայերէն թարգմանութիւնը միջոց պիտի տայ Արիստոտելի հեղինակութիւնների մի քանի մութ տեղերը պարզելու։

Բ.

---

ՇԱԶԼԵՐ, ԴՐ. ՄԱՔՍ, ՄԱՐԴՈՒՍ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (Shasler, Onthropogonie}։ Ընդհանուր մարդկայինը, նորա էութիւնը և եռատարր զարգացումը, կամ՝ «Ծագումն» լեզուի, բարոյականութեան և արուեստի. Լայպցիգ, 1888 Թ., տպ. Ֆրիդրիխ (XV+220 եր.), գինը՝ 6 մարկ։ (Գերմաներէն)։

---

Այս գրուածքում՝ արդէն 70 տարեկանին մօտ փիլիսոփան տալիս է իւր, մի տեսակ, հաւատի դաւանութիւնը (profession de foi). Նորանում նա շօշափում է գիտակցութեան բոլոր խնդիրները՝ իմացակա-